ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
02.2020
03.2020
04.2020
05.2020
06.2020
Հունիս
07.2020
08.2020
09.2020
10.2020
11.2020
12.2020

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Հունիս

թիվ 6 (262)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին

5 «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

12 «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

13 «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

15 «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

16 «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

18 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՌԱՋԻՆ ԳՐԱՎԱՏՈՒՆ» ՍՊԸ գրավատնային գործունեության, «ՍԻԹԻ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

18 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ գրանցման և ներդրումային ծառայությունների մատուցման, «ԳԱ ԳՈՌ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու մասին

18 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Վեդի» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

18 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Նոր Ավան», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «Վանաձոր 2» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

18 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 1 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 94Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

19 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 90-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 91-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 92-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 104-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

36 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

*«Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Կրեդիտավորման պայմանագրում սպառողը ձեռագրով, իսկ էլեկտրոնային եղանակով պայմանագիր կնքելու դեպքում՝ էլեկտրոնային եղանակով տպագրելու միջոցով գրում է, որ գիտակցում է տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը՝ նշելով այդ տոկոսադրույքը:»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով մինչև երեք ամիս ժամկետով կնքվող՝ մինչև 300,000 դրամի չափով սպառողական կրեդիտների համար սահմանում է պարտադիր պահանջներ և պայմաններ, վարկավորման կանոններ՝ հիմք ընդունելով սպառողի վարկունակության, սպառողի պարտքի և եկամտի հարաբերակցության, վարկը սպասարկելու՝ սպառողի ունակության գնահատման չափանիշները:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված նորմատիվ իրավական ակտերը Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

11 հունիսի 2020 թ., Երևան, ՀՕ-288-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հունիսի 3-ին (ՀՀՊՏ N 63 (1618), 17.06.20):

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Հոդված 1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-123-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախաբանը «սպառողների» բառից հետո լրացնել «և հաճախորդների» բառերով, իսկ «ավելացումը» բառից հետո՝ «, ֆինանսական ոլորտում սպառողների և հաճախորդների իրավունքների պաշտպանության համակարգի ստեղծումը, որին պարտադիր մասնակցում են սույն օրենքով նախատեսված կազմակերպությունները» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից տրամադրված լիցենզիա ունեցող անձ (բացառությամբ արտարժույթի առք ու վաճառքի սակարկությունների լիցենզիա և վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի ու քլիրինգի լիցենզիա ստացած անձանց, այն ապահովագրական բրոկերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների), ինչպես նաև «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Բյուրո (այսուհետ՝ Բյուրո).».

2) 5-րդ կետի՝

ա. առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) հաճախորդ՝ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում՝ ֆինանսական կազմակերպությանը պարտավորությունների ապահովման միջոց տրամադրած անձ, որը ներկայացրել է Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կամ ապահովման միջոցի հետ կապված պահանջ:»,

բ. երկրորդ նախադասությունը «տուժողի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վնասների հատուցման և (կամ) դրա հետադարձ պահանջի (սուբրոգացիա)» բառերով.

3) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) իրավասու դատարան՝

ա. հաճախորդի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան,

բ. հաճախորդի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան, եթե հաճախորդն իրավաբանական անձ է, իսկ հաճախորդի՝ օտարերկրյա իրավաբանական

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հունիսի 3-ին (ՀՀՊՏ N 63(1618), 17.06.20):

անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված մասնաճյուղ լինելու դեպքում՝ մասնաճյուղի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան.».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետով.

«11) անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անձ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված Կազմակերպությունների:»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը «ներկայացված» բառից հետո լրացնել «, ինչպես նաև «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային տեղեկատվության վերաբերյալ կամ դրա հետ կապված» բառերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի իմաստով հաճախորդը համարվում է Կազմակերպությանը բողոք-պահանջ ներկայացրած նաև այն դեպքում, երբ հաճախորդի համաձայնությամբ հաճախորդի բողոք-պահանջը ներկայացրել է Գրասենյակը: Կազմակերպությանը Գրասենյակի միջոցով հաճախորդի բողոք-պահանջների ներկայացման կարգը սահմանում է Խորհուրդը: Այդ կարգը հրապարակվում է Գրասենյակի պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ 2-րդ մասերով» բառերը փոխարինել «մասով» բառով:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 1-ին կետը «անունը» բառից հետո լրացնել «(անվանումը)» բառով,

բ. 2-րդ կետը «բնակության» բառից հետո լրացնել «(գտնվելու վայրի)» բառերով,

գ. 4-րդ կետի «, վարկային բյուրոյի դեմ ներկայացված պահանջի դեպքում գույքային պահանջի չափը նշվում է, եթե առկա է գույքային պահանջ» բառերը փոխարինել «(առկայության դեպքում)» բառերով,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետով.

«7.1) անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ հայտարարություն հաճախորդի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսանալու և Գրասենյակին տրված համաձայնություն իր՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու մասին տեղեկատվությունը հարկային մարմնից ստանալու կամ հարկային մարմնի կողմից տրված տեղեկանք իր՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ.»,

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին կետով.

«9.1) ֆիզիկական անձ հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ հաճախորդի պետական գրանցման փաստաթղթի պատճենը կամ անհատականացնող համարը.»,

գ. 10-րդ կետը «հաճախորդի» բառից հետո լրացնել «, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ ընկերության անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձի» բառերով.

2) 2-րդ մասի «լիազորագրի պատճենը» բառերը փոխարինել «լիազորագիրը, ինչպես նաև հաճախորդի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը» բառերով.

3) 3-րդ մասը «գույքային պահանջի» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերով:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը «վարույթում» բառից հետո լրացնել «կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից» բառերով.

2) 9-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ և 11-րդ կետերով.

«10) անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու պահին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի համաձայն, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ չէ.

11) անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը չի պահպանել սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7.1-ին կետով սահմանված պահանջը:»:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում Կազմակերպության բացատրություններն ստանալուց կամ սույն հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 24 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձնապես բարդ գործի պարագայում Ֆինանսական համակարգի հաշտարարը կարող է սույն մասով նախատեսված քսանչորսօրյա ժամկետն իր որոշմամբ երկարաձգել ևս 14 աշխատանքային օրով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Ֆինանսական համակարգի հաշտարարը պահանջի քննության համար անհրաժեշտ տեղեկություններ կամ նյութեր ստանալու համար կարող է դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու իրավաբանական անձանց: Այդ անձինք պարտավոր են պատասխանել Ֆինանսական համակարգի հաշտարարի դիմում-հարցումներին և ներկայացնել իրենց իրավասություններից բխող պահանջվող տեղեկությունները դրանք ստանալու պահից՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Ֆինանսական համակարգի հաշտարարն իրավունք ունի ստանալու սույն մասով սահմանված տեղեկությունները, եթե դրանք պետական կամ ծառայողական գաղտնիք չեն: Հարկային մարմինը Գրասենյակին տեղեկատվությունը տրամադրում է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ առցանց հարցումներին ավտոմատ պատասխանելու եղանակով (այդպիսի համակարգի առկայության դեպքում):»:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով.

«4.1) կողմերը հաշտվել են՝ կնքվել է հաշտության համաձայնագիր, կամ հաճախորդը դիմում է ներկայացրել հաշտության համաձայնության գալու մասին.».

2) 5-րդ կետը «մահացել է» բառերից հետո լրացնել «կամ ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող, իսկ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում՝ լուծարվել է» բառերով.

3) 6-րդ կետը «լուծարվել է» բառերից հետո լրացնել «կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվել է» բառերով:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Պահանջի քննության արդյունքներով Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացնում պահանջը բավարարելու կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու մասին և ոչ ուշ, քան հաջորդ օրը ծանուցում որոշման մասին՝ համապատասխան ծանուցման եղանակով ներկայացնելով որոշումը:».

2) 4-րդ մասի՝

ա. առաջին պարբերության «առաքելու» բառը փոխարինել «ծանուցելու» բառով,

բ. երկրորդ պարբերության «Երեսուն աշխատանքային օրը լրանալուց հետո» բառերը փոխարինել «Հաճախորդի կողմից որոշման հետ համաձայնելու մասին գրությունն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ չհամաձայնելու դեպքում՝ 30 աշխատանքային օրը լրանալուց հետո» բառերով:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով.

«Հոդված 14.1. Հաճախորդի և Կազմակերպության հաղորդակցումը Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ

1. Հաճախորդը պահանջ ներկայացնելիս այդ պահանջի մեջ նշում է Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման եղանակի մասին, իսկ այդպիսի նշում չլինելու դեպքում՝ հաղորդակցումը տեղի է ունենում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ Խորհրդի սահմանած կարգով:

2. Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման եղանակը սույն օրենքով սահմանված փաստաթղթերը կամ տեղեկությունները Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաճախորդին ներկայացնելու ձևն է, որը կարող է լինել էլեկտրոնային, փոստով առաքման կամ հաճախորդի համաձայնությամբ՝ այլ միջոցով: Հաճախորդի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հաղորդակցման կարգը սահմանում է Խորհուրդը: Այդ կարգը հրապարակվում է Գրասենյակի պաշտոնական ինտերնետային կայքում:

3. Ֆինանսական համակարգի հաշտարարի հաղորդակցումը Կազմակերպությունների հետ իրականացվում է էլեկտրոնային կամ այլ եղանակով՝ Խորհրդի սահմանած կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը «լրացուցիչ» բառից հետո լրացնել «մասնակցության» բառով:

Հոդված 13. Օրենքի ամբողջ տեքստում «պարտադիր վճար» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «մասնակցության վճար» բառերով, իսկ «վճար» բառը համապատասխան հոլովաձևերով՝ «մասնակցության վճար» բառերով, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետի:

Հոդված 14. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը «ձայներով» բառից հետո լրացնել «՝ գործող Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, և ուժի մեջ է մտնում գործող Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունների ավարտի հաջորդ օրվանից, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով:

Հոդված 15. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում Ֆինանսական համակարգի հաշտարարին նշանակում է Խորհուրդը՝ սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով, Ֆինանսական համակարգի հաշտարարի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:»:

Հոդված 16. Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը «կարգը» բառից հետո լրացնել «, սոցիալական ապահովության ծախսերը և դրանց հատկացման կարգը, Գրասենյակի կառավարչի տեղակալի հաստիքը, որին նշանակված անձը չի կարող իրականացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի մասնագիտական գործունեություն» բառերով:

Հոդված 17. Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 26. Խորհրդի ձևավորումը

1. Խորհուրդը կազմված է յոթ անդամից:

2. Խորհրդի անդամներին նշանակում է՝

1) մեկին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

2) մեկին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը.

3) մեկին՝ բանկերի միությունը (միությունները), մեկին՝ վարկային կազմակերպությունների միությունը (միությունները), մեկին՝ ապահովագրական ընկերությունների միությունը (միությունները), մեկին՝ մյուս Կազմակերպությունների միությունները.

4) մեկին՝ սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները:

3. Խորհրդի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով:

4. Խորհրդի նոր անդամը պետք է նշանակվի Խորհրդի անդամի լիազորությունների դադարումից ոչ շուտ, քան երեք, և ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ սույն հոդվածով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

5. Եթե սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կազմակերպության միություն(ներ)ը և (կամ) սպառողների իրավունքների պաշտպանության միությունները չեն նշանակում Խորհրդի՝ իրենց անդամին, ապա նրան նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը՝ մեկ ամսվա ընթացքում:

6. Խորհրդի անդամների նշանակման իրավունք ունեն այն Կազմակերպությունների միությունները և սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունները, որոնց պետական գրանցման օրվանից անցել է առնվազն հինգ տարի:

Կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Խորհրդի անդամների նշանակման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:»:

Հոդված 18. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը «ժամկետով» բառից հետո լրացնել «, բայց ոչ ավելի, քան մինչև նրա լիազորությունների ժամկետի ավարտը» բառերով:

Հոդված 19. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում Խորհրդի անդամը նշանակվում է սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախորդ Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում:»:

Հոդված 20. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «Կազմակերպությունների» բառից հետո լրացնել «տեսակների» բառով:

Հոդված 21. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա. 2-րդ կետը «կազմակերպություններ» բառից հետո լրացնել «(բացառությամբ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների)» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1. Կենտրոնական դեպոզիտարիա՝ 140 000 դրամ.»,

գ. 4-րդ կետի «բրոքերներ» բառը փոխարինել «բրոկերներ (բացառությամբ այն ապահովագրական բրոկերների, որոնք ծառայություններ են մատուցում բացառապես ապահովագրական ընկերություններին)» բառերով.

2) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Ընդ որում, Կազմակերպության լիցենզիան մինչև ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ը դադարեցվելու դեպքում Կազմակերպությունը չի վճարում այդ եռամսյակի համար վճարման ենթակա մասնակցության վճարները: Ընթացիկ եռամսյակի առաջին ամսվա 20-ից հետո Կազմակերպության լիցենզիան դադարեցվելու դեպքում այդ եռամսյակի համար մասնակցության վճարների վճարման պարտավորությունը չի դադարում, իսկ այդ եռամսյակի համար արդեն իսկ վճարված մասնակցության վճարները չեն վերադարձվում:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը և Կենտրոնական բանկի խորհուրդը համատեղ սահմանում են սույն հոդվածով սահմանված մասնակցության վճարների և սույն օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տոկոսների մասով ժամկետանց պարտավորությունների հավաքման, հաշվառման և դուրսգրման կարգը:»:

Հոդված 22. Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է Կազմակերպության լիցենզիայի դադարման օրվանից:»:

Հոդված 23.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված Խորհրդի անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Խորհրդի՝ առաջին անգամ նշանակված անդամներն Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակվում են հետևյալ ժամկետներով.

1) Կառավարության և Կենտրոնական բանկի, սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից՝ երեք տարի ժամկետով.

2) բանկերի և ապահովագրական ընկերությունների միությունների կողմից՝ երկու տարի ժամկետով.

3) վարկային կազմակերպությունների և այլ Կազմակերպությունների միությունների կողմից՝ մեկ տարի ժամկետով:

4. Խորհրդի՝ հետագայում ընտրվող բոլոր անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով:

5. Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է Կազմակերպությունների միությունների և սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունների կողմից Խորհրդի անդամների նշանակման կարգը մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

6. Գրասենյակի հոգաբարձուների խորհուրդը Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով և 14.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված կարգը (կարգերը) ընդունում է մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը ներառող ընթացիկ եռամսյակի համար մասնակցության վճարի չափաբաժնի ամբողջ գումարը վճարում է մինչև հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը՝ տվյալ եռամսյակի չափաբաժնի հետ: Հետագայում Կենտրոնական դեպոզիտարիան մասնակցության վճարները կատարում է օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

11 հունիսի 2020 թ., Երևան, ՀՕ-292-Ն

«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
12 հունիսի 2020 թ., Երևան, ՀՕ-298-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հունիսի 3-ին (ՀՀՊՏ N 63 (1618), 17.06.20):

«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկության տրամադրումը, այդ թվում՝ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի), անվանական արժեքի, քանակի, տեսակի և դասի, թողարկողի, բաժնետոմսերով իրականացված գործարքների, բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների, թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ սույն օրենքի 197-րդ հոդվածի իմաստով Հայաստանյան անվանատերերին և Օտարերկրյա անվանատերերին հասանելի տեղեկությունների տրամադրումը.».

2) 2-րդ մասի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձինք սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունները տրամադրում են տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգին հասանելիություն տալու միջոցով, իսկ այդ համակարգից տեղեկություններ ստանալու անհնարինության կամ համակարգ չմուտքագրված տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մարմնից ստացված հարցմանը գրավոր պատասխան ներկայացնելու միջոցով: Տեղեկությունները տրամադրվում են անվճար, բացառությամբ թղթային ձևով տրամադրված տեղեկությունների, որոնց համար հատուցման կարգը և

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հունիսի 3-ին (ՀՀՊՏ N 69 (1624), 24.06.20):

չափը նախատեսվում են տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 197-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մասով.

«13. Սույն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում նշված մարմինների կողմից Հայաստանյան կամ Օտարերկրյա անվանատերերի մոտ առկա տեղեկությունների վերաբերյալ հարցումների դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան սույն հոդվածով սահմանված ժամկետներում և կարգով դիմում է անվանատերերին և դիմումի հիման վրա ստացված տեղեկությունները փոխանցում է հարցումն իրականացնող մարմնին:»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգը սահմանող՝ Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

24 հունիսի 2020 թ., Երևան, ՀՕ-306-Ն

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ֆինանսական վարձակալություն (լիզինգ)» բառերը փոխարինել «լիզինգ» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
29 հունիսի 2020 թ., Երևան, ՀՕ-317-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հունիսի 18-ին (ՀՀՊՏ N 71 (1626), 29.06.20):

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին[*]

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 6-րդ մասի «գ» կետի «ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային)» և «ֆինանսական վարձակալության (լիզինգային)» բառերը փոխարինել «լիզինգային» բառով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի «ֆինանսական վարձակալություն (լիզինգ)» բառերը փոխարինել «լիզինգ» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
29 հունիսի 2020 թ., Երևան, ՀՕ-318-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հունիսի 18-ին (ՀՀՊՏ N 71 (1626), 29.06.20):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱՌԱՋԻՆ ԳՐԱՎԱՏՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության, «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 85Ա, 98Ա):
- ***Գրանցվել և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել*** «ՋԻ ԷՄ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 89Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԳԱ ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 96Ա):
- ***Գրանցվել է*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Վեդի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/317Ա):
- ***Թույլատրվել է*** «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Նոր Ավան» մասնաճյուղի, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Վանաձոր 2» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/327Ա, 1/331Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 300 000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/343Ա), 1 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/343Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2020 թ. հունիսի 16-ի թիվ 94Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 4.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 6.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 3.0%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի թիվ 75-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգի ներդրման սահուն գործընթացը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի մայիսի 8-ի թիվ 75-Ն որոշման 4-րդ կետում «հունիսի» բառը փոխարինել «սեպտեմբերի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
12 հունիսի 2020 թ., Ն 90-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ Ն21(689), 12.06. 2020):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համատեղ որոշումը **

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 15-րդ մասը, 25-րդ հոդվածի 2.1-րդ մասը, 26.1-րդ հոդվածի 7-րդ մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ո ր ո շ ո ւ մ ե ն.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև տեղեկությունների փոխանցման ձևաչափը՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
12 հունիսի 2020 թ., N 91-Ն

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հ. Հարությունյան
12 հունիսի 2020 թ., N 04-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ N21(689), 12.06. 2020):

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունիսի 12-ի
թիվ 91-Ն որոշմամբ

Հաստատված է
Կոոռւպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2020 թվականի հունիսի 12-ի
թիվ 04-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ նաև՝ Բանկ) կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց (այսուհետ նաև՝ Հայտարարատու) և բարեվարքության հարցաթերթիկ լրացնելու պարտավորություն ունեցող անձանց (այսուհետ նաև՝ Թեկնածու) վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը:

2. Օրենքով սահմանված տեղեկությունները փոխանցվում են Հավելված 2-ով սահմանված ձևաչափով (այսուհետ նաև՝ Ձևաչափ)՝ xml (Էքս էմ էլ) սխեմային համապատասխան:

3. Հանձնաժողովը Հայտարարատու կամ Թեկնածու անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ստանալու համար լրացնում է Հավելված 2-ի՝ Հայտարարատու անձի անձնական տվյալները, վերաբերելի ժամանակահատվածները և կոնկրետ ամսաթվերը: Լրացված Ձևաչափը Հանձնաժողովի լիազոր անձը CBANet (ՍիԲիԷյՆեթ) միջբանկային համակարգչային ցանցի միջոցով ուղարկում է Բանկի պատասխանատու անձի CBANet (ՍիԲիԷյՆեթ) էլեկտրոնային հասցեին (այսուհետ նաև՝ էլեկտրոնային հասցե)՝ «Բանկային գաղտնիք» նշագրմամբ: Բարեվարքության հարցաթերթիկ լրացնելու պարտավորություն ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ստանալու դեպքում Ձևաչափում պարտադիր նշում է կատարվում՝ «Բարեվարքության ուսումնասիրության համար»:

4. Բանկի պատասխանատու անձը Ձևաչափը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է լրացված դաշտերը: Հանձնաժողովի (լիազոր անձի) կողմից լրացման ենթակա դաշտերը թերի կամ կիսատ լրացված լինելու դեպքում Բանկի պատասխանատու աշխատակիցը դրանք հայտնաբերելուց անմիջապես հետո հետ է ուղարկում Ձևաչափը՝ հաղորդագրության դաշտում նշելով թերությունների մասին:

5. Հանձնաժողովի լիազոր անձը, ստանալով թերությունների մասին հաղորդագրությունը, դրանք շտկելուց հետո անմիջապես ուղարկում է Բանկի պատասխանատու աշխատակցի էլեկտրոնային հասցեին:

6. Բանկի պատասխանատու աշխատակիցը, ստանալով ճշգրտված Ձևաչափը, անմիջապես նույն համակարգով ուղարկում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերի համապատասխան էլեկտրոնային հասցեներին:

7. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերը, ստանալով Ձևաչափը, պարտավոր են 7 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձևաչափով հայցվող տեղեկությունը՝ բացառությամբ սույն Կարգի 8-րդ կետով սահմանված անձանց վերաբերյալ հարցումների:

8. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերը Թեկնածուի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ստանալու Ձևաչափը ստանալուց հետո պարտավոր են 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձևաչափով հայցվող տեղեկությունը:

9.Այն դեպքերում, երբ սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետը բավարար չէ (տեղեկության ծավալները մեծ են կամ արխիվացված են և այլ) ներկայացնելու հայցվող տեղեկությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկը CBANet (ՍիԲիէյՆեթ) միջբանկային համակարգչային ցանցի միջոցով էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Բանկին՝ նշելով չտրամադրելու պատճառը: Բանկի պատասխանատու անձը, ստանալով հաղորդագրությունը, կարող է ժամկետը երկարաձգել ևս 5 աշխատանքային օրով՝ դրա մասին CBANet (ՍիԲիէյՆեթ) միջբանկային համակարգչային ցանցի միջոցով էլեկտրոնային հաղորդագրությամբ ծանուցելով նաև Հանձնաժողովի լիազոր անձին:

10. Այն դեպքում, երբ Ձևաչափում նշված ժամանակահատվածի համար հայցվող տեղեկությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացվել է կամ չի պահպանվել՝ այն չի տրամադրվում՝ համապատասխան դաշտերում կատարելով «Առկա չէ» նշումը:

11. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերի կողմից հայցվող տեղեկությունը ստանալուց հետո Բանկի պատասխանատու անձը 1 աշխատանքային օրվա ընթացքում ստացված տեղեկությունը էլեկտրոնային հաղորդագրությամբ ուղարկում է Հանձնաժողովի լիազոր անձին:

12. Հանձնաժողովի լիազոր անձը, ստանալով տեղեկությունը, հետադարձ հաղորդագրությամբ հավաստում է այն ստանալու փաստը:

13. Օրենքով սահմանված բարեվարքության հարցաթերթիկ լրացնելու պարտավորություն ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները փոխանակվում են սույն Կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

14. Հանձնաժողովին արգելվում է սույն կարգով ստացված բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը տրամադրել երրորդ անձանց, հրապարակել, հասանելի դարձնել դրանց իրավասությունը չունեցող անձանց, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով սահմանված դեպքերում: Սույն կետի պահանջները խախտելը առաջացնում է օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

15. Հանձնաժողովը Հայտարարատու կամ Թեկնածու անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ստանալու համար տարեկան կարող է կատարել միայն մեկ հարցում, բացառությամբ այն դեպքերի, երբ.

1. Հայտարարատու անձի կողմից ներկայացված հայտարարագրի և Ձևաչափով ներկայացված տեղեկությունների միջև առկա է առերևույթ անհամապատասխանություն, Հանձնաժողովը կարող է կրկին հարցում կատարել միայն անհամապատասխանության մասով,
2. Հանձնաժողովի կողմից Ձևաչափով սահմանված տեղեկությունը ստանալուց հետո՝ օրենքով սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից ստացված տեղեկությունները առերևույթ չեն համապատասխանում Ձևաչափով ներկայացված տեղեկությանը, Հանձնաժողովը կարող է կրկին հարցում կատարել միայն անհամապատասխանության մասով,

3. Հայտարարատուն Օրենքով սահմանված կարգով միևնույն տարվա ընթացքում ներկայացնում է մեկից ավելի հայտարարագիր, Հանձնաժողովն իրավասու է կատարել հայտարարագրերի թվին համապատասխան քանակով հարցումներ,
4. Օրենքով սահմանված պաշտոնների թեկնածուների վերաբերյալ Հանձնաժողովն իրավասու է կատարել նրանց՝ Օրենքով սահմանված պաշտոններին դիմելու քանակին համապատասխան թվով հարցումներ: Այն դեպքում, երբ թեկնածու անձը դառնում է Հայտարարատու պաշտոնատար անձ, Հանձնաժողովը կարող է հարցում կատարել նաև որպես Հայտարարատու պաշտոնատար անձ՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:
5. Օրենքով սահմանված դեպքերում Հանձնաժողովի կողմից իրականացվող լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում առաջացել է հիմնավոր կասկած տեղեկությունների անարժանահավատության վերաբերյալ: Սույն կետի հիմքով Հանձնաժողովը կրկին հարցում կատարելու համար պետք է Ձևաչափի հետ ներկայացնի նաև գրավոր հիմնավորումներ՝ առաջացած կասկածների վերաբերյալ:

16. Հանձնաժողովը պարտավոր է սույն կարգով ստացված բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պահպանել Հանձնաժողովում՝ այդ նպատակների համար առանձնացված, Բանկի կողմից ներկայացված պահանջները բավարարող սերվերների վրա՝ պաշտպանված տիրույթում:

17. Հանձնաժողովը ստացված՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող է պահպանել այն ստանալուց հետո 5 տարի:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունիսի 12-ի
թիվ 91-Ն որոշմամբ

Հաստատված է
Կոոռւպցիայի կանխարգելման հանձնաժողովի
2020 թվականի հունիսի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Կոոռւպցիայի կանխարգելման հանձնաժողովի միջև փոխանակվող տեղեկությունների ձևաչափ*

	Անձնական տվյալներ՝ ➢ Անուն, ազգանուն, հայրանուն. ➢ ՀԾՀ կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանք, ➢ Անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալներ (առկայության դեպքում՝ բոլոր անձնագրերի տվյալները, այդ թվում՝ վավերականության ժամկետն ավարտված)	Վերաբերելի ժամանակահատվածներ և կոնկրետ ամսաթվեր
Հ/հ	**Տեղեկության անվանումը**	**Տեղեկության նկարագրությունը**
1.	Պահատուփերի առկայություն	Այո կամ ոչ
2.	Հաշիվների առկայություն	Այո կամ ոչ
3.	Հաշվի (ների) մնացորդ	Մնացորդի չափը՝ ըստ արժույթի
4.	Հայտարարագրման ենթակա գործարքի վերաբերյալ տեղեկություն	1. Անշարժ գույքի ձեռքբերման համար կատարված 1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը* գերազանցող (ներառյալ՝ 1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) վճարումներ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ներկայացված ժամանակաշրջանի) 2. Անշարժ գույքի օտարման դիմաց ստացված 1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) վճարումներ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ներկայացված ժամանակաշրջանի) 3. Տրանսպորտային միջոցի ձեռքբերման համար կատարված 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) վճարումներ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ներկայացված ժամանակաշրջանի)

		4. Տրանսպորտային միջոցի օտարման դիմաց ստացված 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) վճարումներ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ներկայացված ժամանակաշրջանի) 5. 8 միլիոն (ներառյալ՝ 8 միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող միանվագ գնման գործարք (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ներկայացված ժամանակաշրջանի) 6. Ստացված և տրամադրված 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) փոխառություններ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ներկայացված ժամանակաշրջանի) 7. Ստացված 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) շահաբաժիններ (դիվիդենդներ) (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ըստ ներկայացված ժամանակաշրջանի) 8. Ժառանգություն ստացած 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) դրամական միջոցներ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ըստ ներկայացված ժամանակաշրջանի) 9. 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 200,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) աշխատանքի վարձատրություն կամ դրան հավասարեցված այլ վճարներ (նույնականացվում է ըստ վճարման նպատակի և ըստ ներկայացված ժամանակաշրջանի)
5.	Պահանջվող ժամանակահատվածում հաշվի համախառն մուտքի ամփոփ տեղեկատվություն	Մուտքերի ամբողջ (համախառն) չափը՝ ըստ հաշիվների և արժույթների՝ պահանջվող ժամանակահատվածի համար
6.	Պահանջվող ժամանակահատվածում հաշվի համախառն ելքի ամփոփ տեղեկատվություն	Ելքերի ամբողջ (համախառն) չափը՝ ըստ հաշիվների և արժույթների՝ պահանջվող ժամանակահատվածի համար
6.1	Համախառն կանխիկ ելքեր	1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) կանխիկ ելքերի ամբողջ (համախառն) չափը՝ ըստ հաշիվների և արժույթների՝ պահանջվող ժամանակահատվածի համար

6.2	Համախառն կանխիկ մուտքեր	1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող (ներառյալ՝ 1,000,000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը) կանխիկ մուտքերի ամբողջ (համախառն) չափը՝ ըստ հաշիվների և արժույթների՝ պահանջվող ժամանակահատվածի համար

** Ձևաչափն ամբողջական ներկայացվելու դեպքում Բանկի կողմից փրամադրման են ենթակա ամբողջական տեղեկությունները: Բանկային գաղտնիք կազմող առանձին տեղեկություններ ստանալու համար Ձևաչափը ներկայացնելիս լրացվում են միայն այն դաշտերը, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է ստանալ տեղեկություններ:*

Արտարժույթի հաշվարկը դրամի նկատմամբ կատարվում է տվյալ պահին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հայտարարված միջին փոխարժեքով:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով նվազեցնել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների շրջանակում պետական աջակցության ծրագրերով ներգրավված միջոցների գծով բանկերի այլընտրանքային ծախսերը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ լրացումը.

1) Կանոնակարգ 2-ի 53-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ ենթակետով.

«9) կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների շրջանակում պետական աջակցության ծրագրերով ներգրավված միջոցների:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջում հրապարակմանը հաջորդող օրը և տարածվում է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների շրջանակում պետական աջակցության ծրագրերով 2020 թվականի մարտի 26-ից հետո ներգրավված միջոցների վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյան
12 հունիսի 2020 թ., Ն 92-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ Ն23(691), 30.06. 2020):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի գործունեության վերլուծական և վիճակագրության հավաքագրման գործընթացների արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» հաստատելու մասին» թիվ 150-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» բառերով:
2) Որոշման նախաբանի 2-րդ պարբերությունում «իրավաբանական անձանց միության» բառերը փոխարինել «հասարակական կազմակերպության» բառերով:
3) Որոշման Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
23 հունիսի 2020 թ., N 104-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հունիսի 19-ին (ՀՀԳՏ N23(691), 30.06.2020):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի հունիսի 19-ի թիվ 104-Ն որոշմամբ

«Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի
թիվ 150-Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Բյուրո) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն հավելվածում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Հաշվետու ամիս***՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան,
2) ***Հաշվետու եռամսյակ***՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան,
3) ***Հաշվետու տարի***՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանը,
4) ***Հաշվետու ժամանակաշրջան***՝ հաշվետու եռամսյակ կամ հաշվետու տարի՝ ըստ տվյալ ձևի համար սահմանված ներկայացման պարբերականության,
5) ***Կարգավորված հայտ***՝ Բյուրո ներկայացված հայտ, որի վերաբերյալ առկա է Բյուրոյի կողմից պահանջը բավարարելու կամ մերժելու մասին որոշում,
6) ***Կարգավորված հայց***՝ դատարան ներկայացված հայց, որի վերաբերյալ առկա է հայցը բավարարելու (այդ թվում՝ մասնակի բավարարելու) կամ մերժելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

3. Սույն հավելվածում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Բյուրոն Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվետվությունների հետևյալ ձևերը՝ սույն կետով սահմանված աղյուսակում նշված պարբերականությամբ.

	Հաշվետվության անվանումը	Հաշվե-տվության թիվը	Ներկայացման պարբերակա-նությունը
1	*2*	*3*	*4*
1.	Հաշվետվություն Երաշխավորման ֆոնդի միջոցների վերաբերյալ՝ համաձայն Հավելված 1-ի	1	եռամսյակային
2.	Հաշվետվություն Երաշխավորման ֆոնդի մուտքերի և ելքերի վերաբերյալ՝ համաձայն Հավելված 2-ի	2	ամսական
3.	Հաշվետվություն հայտերի, հատուցումների և հետադարձ պահանջի իրավունքի գծով հայցերի և պահանջների վերաբերյալ՝ համաձայն Հավելված 3-ի	3	եռամսյակային
4.	Հաշվետվություն Բյուրոյի եկամուտների և ծախսերի վերաբերյալ՝ համաձայն Հավելված 4-ի	4	եռամսյակային
5.	Հաշվետվություն Բյուրոյի կողմից հայտնաբերված խախտումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ՝ համաձայն Հավելված 5-ի	5	եռամսյակային
6.	Տեղում ստուգումների, հսկիչ գնումների և ստուգիչ փորձաքննությունների արդյունքների ամփոփման հիման վրա կազմվող ստուգման հաշվետվությունները	6	յուրաքանչյուր ստուգման դեպքում
7.	Հաշվետվություն Ավտոտրանսպորտային միջոցների միասնական պատուհանի ծառայության դիմաց վճարների (այսուհետ՝ ԱՄՄՊ) վերաբերյալ՝ համաձայն Հավելված 6-ի	7	տարեկան
8.	Հաշվետվություն կրկնակի փորձաքննությունների վերաբերյալ՝ համաձայն Հավելված 7-ի	8	եռամսյակային
9.	Հաշվապահական հաշվեկշիռ	9	եռամսյակային, տարեկան
10.	Հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին	10	եռամսյակային, տարեկան
